

ՄԵՊՏԵՄԲԵՐ 2020

ԱՄՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





<b>1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ</b> .....	<b>4</b>
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում .....	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում .....	7
1.3. Ջրահեռացման համակարգ .....	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում .....	8
1.5. Էներգահամակարգ .....	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ .....	9
<b>2. Առևտրային տնօրինություններ</b> .....	<b>10</b>
2.1. Բաժանորդների տվյալներ .....	11
2.2. Հասույթ .....	11
2.3. Գանձում .....	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/ .....	13
2.5. Ջրաչափեր .....	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում .....	15
<b>3. Տեխնիկական տնօրինություն</b> .....	<b>16</b>
3.1. Ջրամատակարարման շարունակականություն .....	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում .....	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ .....	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում .....	21
3.5. Գոտիավորման աշխատանքներ .....	22
<b>4. Լրատվական ծառայություն</b> .....	<b>26</b>
<b>5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն</b> .....	<b>28</b>
5.1. Փաստաթղթերի մշակում .....	29
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ .....	29
5.3. Բուժզննում .....	30
5.4. Դասընթացներ/սեմինարներ .....	30
5.5. Առողջության անվտանգության միջազգային շաբաթ-2020 .....	31
5.6. Անվտանգության ստուգայցեր .....	31
5.7. Համագործակցություն ՀՀ ԱԲՆ-ի հետ .....	32
<b>6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ</b> .....	<b>33</b>
6.1. Համակարգչային ցանց .....	34
6.2. Բնտերակտիվ համակարգ .....	35

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

### Քաղաք Երևան

#### ● Նոր Նորք վարչական շրջան

«Հարավ» ՇՏ «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից Նոր Նորք 2-րդ գանգված, Թոթովենցի փողոց 6/1 հասցեում  $d=50$ մմ  $L=50$ գծ/մ երկարությամբ քայքայված պողպատե ջրագիծը փոխարինվել է  $D=63$ մմ պոլիէթիլենային ջրագծով: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է բնակիչ-բաժանորդների ջրամատակարարումը, խնայվել է մոտ  $Q=3$ լ/վրկ ջրաքանակ:



#### ● Էրեբունի վարչական շրջան

«Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Ջրաշեն 2 փողոցում շարունակվում են ջրագծերի վերակառուցման աշխատանքները: Ընթացիկ ամսում կառուցվել են  $D=75$ մմ  $L=300$ գծ/մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենային ջրագծեր: Թվով 35 բնակիչ-բաժանորդի տարածքից դուրս տեղադրվել են ջրաչափական դիտահորեր և ընթացքի մեջ են ջրաչափերի փոխարինման աշխատանքները:



● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Նոր Արեշ 14 փողոց 40 շենքի  $D=50$ մմ երկարությամբ քայքայված պողպատե ջրագիծը փոխարինվել է  $D=63$ մմ  $L=100$ գծ/մ պոլիէթիլենային խողովակներով: Շահագործումից հանվել է  $D=50$ մմ  $L=80$ գծ/մ պողպատե խողովակ:

● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից Խորենացու փողոց 230/71 հասցեում իրականացվել են վթարաորոնողական աշխատանքներ, ինչի արդյունքում շահագործման համար ոչ պիտանի  $D=250$ մմ թուջե խողովակի  $L=80$ գծ/մ հատվածը հանվել է շահագործումից: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է  $Q=4$ լ/վրկ ջրաքանակ:



### Մարզ Արարատ

● Ուրցաձոր համայնք 1-ին փողոցում գտնվող  $d=100$ մմ  $L=280$ գծ/մ երկարությամբ թուջե քայքայված ջրագիծը, որը անցնում էր սեփականություն հանդիսացող տնատիրությունների տարածքներով, փոխարինվել է  $D=50$ մմ պոլիէթիլենային խողովակներով: Թվով 7 բնակիչ-բաժանորդի անհատական միացումները փոխարինվել են  $d=15$ մմ  $L=40$ գծ/մ ընդհանուր երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով, տարածքից դուրս տեղադրվել են պոլիմերավազային դիտահորեր և փոխարինվել են ջրաչափական սարքերը:



● Տափերական կառուցվել է  $d=75-160$ մմ,  $L=3300$ գծ/ երկարությամբ պոլիէթիլենային ջրագիծ: Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է 3000մ թուջե ամբողջովին շահագործման համար ոչ պիտանի խողովակաշարը, տնտեսվել է  $Q=3$ լ/վրկ ջրաքանակ: Ջրամատակարարման տևողությունը 6 ժամի փոխարեն դարձել է 14 ժամ:

● Նոր Կյանք համայնքում կառուցվել է  $d=50-125$ մմ,  $L=2250$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային ջրագիծ, թվով 15 բնակիչ-բաժանորդի տարածքից դուրս տեղադրվել են ջրաչափական դիտահորեր և փոխարինվել են ջրաչափական սարքերը: Իրականացված աշխատանքների արդյունքում համայնքի թվով 330 բնակիչ-բաժանորդի ջրամատակարարումը իրականացվում է նոր ջրագծերով և նոր ջրաչափերով, տնտեսվել է մոտ  $Q=3,5$ լ/վ ջրաքանակ:



## Մարզ Արմավիր

### Քաղաք Արմավիր

Բաղրամյան փ. 31, 33, 35 բազմաբնակարան շենքերի բակային հատվածի  $d=100$ մմ  $L=160$ գծ/մ պողպատե քայքայված և կոռոզիայի ենթարկված խողովակները փոխարինվել են  $d=90$ մմ պոլիէթիլենային խողովակներով:  $d=50$ մմ պոլիէթիլենային խողովակներով փոխարինվել է նաև նշված շենքերի թվով 9 մուտքագիծ:



Սեպտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2,281
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	23,919
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	24,495
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	11,820
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	0
Շահագործումից հանված ջրագիծ	մ	7296.7
Կառուցված ջրագիծ	մ	5504.6
Կառուցված կոյուղագիծ	մ	451
Վերացված գաղտնի վթարներ	հատ	29
Փոխարինված փական	հատ	33
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	0
Մաքրված դիտահոր	հատ	615
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	25.82
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1213
Ջրահեռացման ցանցում	հատ	2200
Պումպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	496

Սեպտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	680	1139	484

### 1.2. ԶՐԱԶԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է սեպտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	125	5	2	2	0	0	0	0	0	134
Փոխարինված	192	25	2	1	0	9	0	1	0	230
Տեղափոխված	5	0	0	0	0	0	0	0	0	5
Տեխ. ակտ	43	17	2	1	0	1	1	2	0	67
Ընդամենը	365	47	6	4	0	10	1	3	0	436

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 436 ջրաչափ: Կատարված աշխատանքների 83,72 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

### 1.3. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սեպտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4՝ Վերացված վթարների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամաս	Գոյուղագծերի լվացում / Մ	Գոյուղագծերում առաջացած խցանումների բացում / տեղ	Գոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում / գծ/մ
1	Արաբկիր	1045	215	60
2	Մաշտոց	1480	195	54
3	Շահումյան	1655	165	34
4	Զեյթուն	1230	190	0
5	Շիրակ	1390	406	9
6	Արթիկ	0	75	80
7	Ապարան	0	28	0
8	Ալավերդի	1210	12	18
9	Աշոցք	190	5	12
10	Բերդ	20	3	0
11	Իջևան	515	16	8
12	Լոռի	2260	188	6
13	Նոյեմբերյան	0	16	0
14	Սպիտակ	0	28	0
15	Ստեփանավան	0	13	0
16	Թալին	0	16	0
17	Տաշիր	240	7	0
18	Էջմիածին	0	141	0
19	Զարենցավան	320	78	20
20	Արմվյան	1850	62	0
21	Հրազդան	3180	103	7
22	Աշտարակ	1840	16	0
23	Կենտրոն	1140	413	23
24	Հյուսիս	0	267	40
25	Հարավ	0	367	0


h/h	Տեղամաս	Կոյուղագծերի լվացում / Մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում / տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում / գծ/մ
26	Արմավիր	0	106	60
27	Արտաշատ	0	93	0
28	Արարատ	1700	84	0
29	Մասիս	0	52	0
30	Գավառ	100	11	0
31	Սևան	340	87	20
32	Մարտունի	0	25	0
33	Վարդենիս	0	11	0
34	Ճամբարակ	0	14	0
35	Դիլիջան	140	37	0
36	Վայք	0	21	0
37	Եղեգնաձոր	0	3	0
38	Ջերմուկ	100	18	0
39	Սիսիան	260	72	0
40	Գորիս	20	28	0
41	Կապան	905	82	0
42	Մեղրի	0	18	0
	Ընդամենը	23130	3787	451

### 1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՅՈՒՄ

● Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանի Wilo մակնիշի 35 կվտ հզորությամբ պոմպի շարժիչը այրվել էր: Այն ուղարկվեց շարժիչի փաթեթման արհեստանոց և վերանորոգումից հետո հավաքվեց և տեղադրվեց պոմպակայանում: Փոխարինվեց նաև էլեկտրական վահանակում եռաֆազ թողարկիչը, որի արդյունքում պոմպերը աշխատում են անխափան:

Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանի հակադարձ փականը խցանվել էր, որի արդյունքում ջուր չէր մղվում: Արդյունքում այն ապամոնտաժվեց մաքրվեց և տեղադրվեց, որից հետո պոմպերը աշխատում են անխափան:



● Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում ավազորսիչ մտնող կեղտաջրի մուտքը փակվեց, որպեսզի կատարվեր զննում: Արդյունքում ավազորսիչից դատարկվեց ամբողջ կեղտաջուրը, ստուգվեց կոնվեյերի աշխատանքը, մաքրվեց օդամուղի խողովակների անցքերը և վերջում միացվեց համակարգին:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	69,952	18
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	83,836	25,2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	158,120	7
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	126,239	21,6
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	107,478	9,9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	15,146	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	10,295	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	25,200	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	6,100	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	4,371	0	0



## 1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակն ըստ աշխատանքի նկարագրի
Պոմպի աշխատանքի գնում և կարգավորում	135
Էլեկտրական սարքերի գնում և կարգավորում	16

## 1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար սեպտեմբեր ամսվա ընթացքում նորոգվել են թվով 8 մեքենայի շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 7 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճուպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 20 մեքենամեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակուումի առանցքակալներ, հարվածամեղմիչի գսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 47 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել է: Թվով 3 մեքենայի մարտկոցը փոխարինվել է նորերով: Փոխարինվել են թվով 74 մեքենամեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր: Նորոգվել է թվով 4 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները: Թվով 11 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր: Թվով 8 մեքենայի և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման ռետինե խողովակներ, միսոցներ: Վերանորոգվել են թվով 5 մեքենաների հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուխ լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 8 մեքենամեխանիզմի վրա:


Թվով 5 մեքենայի վրա իրականացվել են գներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 7 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 5 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 5 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

«Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունում 2020թ. սեպտեմբերի 1-ից կառուցվածքային փոփոխությունների արդյունքում նախկին Երևանի և Մարզերի տարածաշրջանների առևտրային տնօրինությունների միավորվեց ձևավորվեց մեկ ընդհանուր Առևտրային տնօրինություն: Առևտրային տնօրինության (ԱՏ) կառուցվածքում նույնպես կատարվեցին որոշակի փոփոխություններ, մասնավորապես միավորվեցին որոշ առևտրային տեղամասեր, նախկին մարզերի տարածաշրջանի վերահսկողության ծառայության բոլոր աշխատակիցները տեղափոխվեցին Գլխավոր տնօրինության Առևտրային վերահսկողության ստորաբաժանում:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.10.2020թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 515,582 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2020թ. սեպտեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	629,715	509,957	81,0
	Իրավաբանական անձ	27,209	20,856	76,7

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	722,416	597,758	82,7
	Իրավաբանական անձ	34,143	24,130	70,7

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Արդյունքում Մարզերի տարածաշրջանի տեղամասերում 2020թ. սեպտեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվը, (այցելությունների թիվը), չնայած Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 64,937 բաժանորդով (կամ մոտ 11%):

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 414 նոր բաժանորդ:

## 2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակարգ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Սեպտեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 3322 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 09.2020
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	1290	1471	289	3050
	Իրավաբանական անձ	97	136	39	272
	Ընդամենը	1387	1607	328	3322

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ սեպտեմբեր ամսին փոխարինված 3322 ջրաչափերի մոտ 58%-ը (կամ 1935 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 232,423 մ3 հատույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2020թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



### 2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Սեպտեմբեր ամսին գանձումը կազմել է 1,957.952 մլն դրամ (87 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև մարտ ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ինչպես նաև ռազմական դրությունը, ընկերությունը սեպտեմբեր ամսին գերծ է մտացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված՝ անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

### 2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՄՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Սեպտեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 95 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 8,63 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2020թ		Բավարարված		Մերժված		2017-2020թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀՎ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10310	1189686302	6569	664707721	142	19805134	3341	585139433	3711	318579324


Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 63,71 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1,38 %-ը մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.10.2020թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում սեպտեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	7,251.00	2,101.80
Բնակիչ-բաժանորդներ	5,425.80	1,473.60
Իրավաբանական անձեր	1,825.20	628.20

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 217.1 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:



## 2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.10.2020թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	686,808	591,943	86,2	33,001	24,138	73,1
	Առանց ջրաչափի	34,064	2,069	6,1	905	9	1,0

Տվյալների բազայում 01.10.2020թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	858,755	377,011	43,9	37,026	9,695	26,2

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4661 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 922 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճզգրիտ հաշվառմանը:

### ՊԿԱՄ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափների ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափների քանակ	%
գ.Քասախ	2307	1877	81,2
գ.Պոռոջան	1549	1022	65,8
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5852	1806	30,8

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման որոշակի աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 7,288, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5,304, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 970, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,363, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 819, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1142 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2666 ջրաչափական սարք:

## 2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրվում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Առևտրային	208	143,789	24,150,202

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ






### 3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի սեպտեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.1%, ինչը ինչը 0.5%-ով պակաս է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Մարզերում այդ ցուցանիշը կազմել է 82.6%, որը 2%-ով ավել է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:


Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն




● Մարզերում այդ ցուցանիշը կազմել է 82.5%, որը 0.9%-ով պակաս է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:



### ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - Մարզեր




Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են 34 ՃԿՊ-ներ:

Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.






Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաբանակը 2020թ. սեպտեմբեր ամսին, 2019թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 147 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 335 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



### 3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 4562 ԿՎտ.ժ. (0,97%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՑ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ\*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության փոքրցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 234 հասցե: Թվով 3 հասցեում հայտնաբերվել են հավելագրում, որը ճշտագրվել է ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից:

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. ենթակայի ծախսը ավելացել է 472,78 ԿՎտ.ժ կամ 2.3% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

**Էջմիածին**




**Կատարված աշխատանքներ**

Թվով 330 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 107 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

**Ինվերտորների տեղադրում**

Մեկ հասցեում թվով 26 պնևմատիկ համակարգեր փոխարինվել են ինվերտորային համակարգով, էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 3254,42 ԿՎտ/ժամ (13%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


**Տեղադրված ինվերտորների սպառած էլեկտրաէներգիա**



Հաշվետու ժամանակահատվածում 25 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● Մեպտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 333,115 ԿՎտ.ժամ կամ 21,09% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

*Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը ավելացել է 32,260 ԿՎտ.ժ/ամիս կամ 1,37 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա*



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 445,036 ԿՎտ.ժ կամ 8,89 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա*



### 3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացնում են սեպտեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները:

<i>Աշխատանքի անվանում</i>	<i>Չ/Մ</i>	<i>Քանակ</i>
Երևան քաղաքի շենքերի տեղադիրքի և փողոցների թվայնացման աշխատանքներ	հատ	1
Բաժանորդների GIS կողավորման աշխատանքներ և կողավորված բաժանորդների տվյալների մուտքագրում «Ինտերակտիվ համակարգ»	հատ	1
Ֆիզիկական բաժանորդների նոր կետերի ավելացում	հատ	550
Իրավաբանական բաժանորդների նոր կետերի ավելացում	հատ	148
Smart monitoring հավելվածից ստացված տեղեկատվության հիման վրա ջրագծերի վթարների թվայնացում	հատ	1
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	22
Կենտրոն տեղամասի կոյուղագծերի թվայնացում՝ երկարությամբ:	169294.083	մետր
Երևանի տեղամասերի ջրային ցանցերի համար ստեղծված հիդրավլիկ մոդելների ամբողջական մոդելի ստեղծում	հատ	1
Նյութերի ներկայացում Ակտիվների կառավարման վերաբերյալ կայացած հանդիպմանը՝ AMC CEE ZONE hangout meeting October 6th, 2020, 10h00-14h00 (CET)	հատ	1
Մյութեր են ներկայացվել Digital Road map-ի վերաբերյալ կայացած հանդիպմանը՝ Smart Committee CEE ZONE hangout meeting October 5th, 2020, 10h00-14h00 (CET)	հատ	1
Իջևան քաղաքի ջրատար համակարգի տվյալների ճշտում և հավաքագրում	հատ	1
Գյումրի քաղաքի ջրատար համակարգի և ջրային ներքին ցանցի վերաբերյալ տվյալների ճշտում, հավաքագրում և թվայնացում	հատ	1
Վանաձոր քաղաքի ներքին ջրային ցանցի և ջրատար համակարգերի վերաբերյալ տվյալների հավաքագրում. այն գտնվում է թվայնացման փուլում	հատ	1

### 3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

#### Արարատյան ջրատար

Ընթացիկ ամսում վերացվել է ջրատարի վրա հայտնաբերված 3 վթար՝ 20լ/վ արտահոսքով: Վթարավերականգնողական աշխատանքների համար պահանջվել է ջրատարի կանգառ:



#### Արզնի 2 ջրատար

Վթար է հայտնաբերվել Գետամեջ գյուղի տարածքում: Վթարը վերացվել է ՇՏ-ի կողմից:



#### Արին Բերդ-Խարբերդ

Ջրատարի վրա հայտնաբերվել է 3 վթար՝ 30լ/վ արտահոսքով:



#### Ապարան ջրատար

Ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվել է բացված օդահեռ փական, որի ջրաքանակի արտահոսքը կազմում էր 10լ/վ: Հայտնաբերվել է նաև 1 ապօրինի ջրամիացում:

Տարբեր տեղամասերում խմբի աշխատակիցների կողմից կատարվել են ջրաքանակների կարգավորման աշխատանքներ:

### 3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ


#### Քաղաք Դիլիջան

● Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցում իրականացված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է ճլ/վ քանակությամբ վթար:



● Դիլիջանում «Շամախյան» ՕԿՁ-ի ելքի վրա տեղադրվել է գիշերային ծախսաչափ՝ ջրաքանակի տարբերության ուսումնասիրության նպատակով:

«Շամախյան» ՕԿՁ-ի ելքը W=400 մ3



#### Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Արուսյան փողոցում սուրվենցիոն ծրագրով իրականացվող փողոցաշինական աշխատանքների շրջանակներում իրականացվել են փողոցում առկա հին, բայց գործող D=300մմ թուջե խողովակի շահագործումից հանման աշխատանքներ:

● Գոտիավորման թիմի հետ համատեղ աշխատանքների արդյունքում պարզվել է, որ շահագործումից հանելուց հետո կան մի քանի տասնյակ բաժանորդներ, որոնք դեռ օգտվում են հին ջրամատակարարման ցանցից: Նախքան շահագործումից հանելը նրանց համար նոր ՊԷ բաշխիչ ցանցից անցկացվել են D=63-25մմ տրամաչափի ՊԷ ջրագծեր:

● Արդյունքում շահագործումից հանվել են D=300մմ թուջե L=1005 գմ և D=300մմ թուջե L=1057 գմ խողովակաշարեր՝ տնտեսելով, ընդհանուր առմամբ, շուրջ 14լ/վ ջրաքանակ:





● Գյումրի քաղաքի Մ.Խորենացի փողոցին հարող 209 տնակային ավանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տարածքում առկա է բավականին մեծ ջրամատակարարման բաշխիչ ցանց, որը կառուցվել է հետերկրաշարժյան տարիներին՝ տարածքում առկա մոդուլային տնակներին ջրով ապահովելու համար:

Ներկա պահին տարածքի՝ հիմնականում չբնակեցված լինելու պատճառով որոշում է կայացվել բաշխիչ ցանցը հանել շահագործումից խցափակման եղանակով:

Արդյունքում շահագործումից հանվել է D=150մմ L=600 գմ և D=100-50-25մմ L=2300գմ խողովակաշար՝ տնտեսելով, ընդհանուր առմամբ, շուրջ 7լ/վ ջրաքանակ:




## Քաղաք Երևան


● Ընտրված որոշ 24-ժամյա ջրամատակարարում ունեցող գոտիներում տեղադրվել են գիշերային ծախսաչափեր՝ հասկանալու համար ջրի բաշխման բալանսը և գաղտնի վթարների առկայությունը: Ուսումնասիրվում են նաև գոտիների գլխամասերում տեղադրված և Locator համակարգին միացված էլեկտրամագնիսական ծախսաչափերի տվյալները: Այդ աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և տեղամասերի կողմից վերացվել է 13 հատ գաղտնի վթար՝ տնտեսելով 9 լ/վ ջրաքանակ՝ արդյունքում բարելավելով բազմաթիվ թաղամասերի ջրամատակարարումը և վերացնելով բաժանորդների ջրի ճնշումների հետ կապված բողոքները: Աշխատանքներն ամբողջությամբ արտացոլվել են SMART MONITORING & STRATEGY համակարգում:

● Ստորև ներկայացված են սեպտեմբեր ամսվա ընթացքում Երևան քաղաքում տեղադրված գիշերային ծախսաչափերի գրաֆիկական տվյալները.


### Մերո խանգաղյան փողոց



### Մունդուկյան փողոցի ջրաքանակ




### Վոմիտասի պողոտա D=300մմ (հարկայինի մոտ)







### Հրայա Քոչար փողոց D=150մ (բուժ-կենտրոնի մոտ)



### Նորք D=150մ (Ոսկու աշխարհի հարևանությամբ)



### Մեքաստիա փողոցի ջրաքանակը



● Գոտիավորման բաժինը ենթադրահսկողության խմբի հետ աշխատանքներ է իրականացնում նաև Երևան քաղաքի այն պոմպակայաններում, որտեղ հոսանքի գիշերային ծախսերում նվազում չի նկատվում: Ուսումնասիրելով էլեկտրաէներգիայի չափիչների արդյունքները ենթադրահսկողության խմբի աշխատակիցների կողմից ներկայացվում են պոմպակայանի հասցեները: Գոտիավորման բաժնի կողմից ուսումնասիրվում են այդ պոմպակայանների ջրամատակարարման սխեմաները, որի արդյունքում արդեն հայտնաբերվել են բազմաթիվ վթարներ:

ԼՐԱՏՎԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հաշվետու ամսին Հանրային կապերի բաժնի /ՀԿԲ/ գլխավոր առաջադրանքը ջրամատակարարման հերթական գրաֆիկի խմբագրում էր, հրապարակումը և իրազեկումը հանրությանը, համապատասխան կառավարման մարմիններին, ընկերության աշխատակազմին, ապահովելով տվյալ գործընթացի նորատիվ ակտերով սահմանված պահանջների կատարումը:

Դրա հետ կապված, հաշվի առնելով, որ որոշ զանգվածային լրատվամիջոցներ լավ չեն հասկացել գրաֆիկի հրապարակման օրենսդրական պահանջներն ու հակված են սխալ մեկնաբանել ջրամատակարարման բարելավմանն ուղղված ՎեոլիաԹիմի աշխատանքը, ՀԿԲ-ն, համագործակցելով Մետրիկա Խորհրդատվական ընկերության հետ, շատ կարճ ժամանակամիջոցում հանրությանը ներկայացրեց համապատասխան պարզաբանում, դրանով իսկ կանխելով սպառողների շրջանում Վեոլիա Ջուր ՓԲԸ նկատմամբ բացասական կարծիքի ձևավորումը:



ՀԿԲ-ի ուշադրության կենտրոնում են շարունակել մնալ COVID-19-ի հետ կապված միջոցառումները: Մասնավորապես, մի քանի անգամ հայտարարություն է հրապարակվել Բաժնետիրերի սպասարկման գրասենյակների աշխատանքային ռեժիմի, ինչպես նաև սպառողների հետ ուղղակի կամ առցանց հաղորդակցվելու կարգի վերաբերյալ:

Սեպտեմբերին պարբերաբար լուսաբանվել է համակարգի կառուցներում. քլորակայաններ, պոմպակայաններ, ջրի աղբյուրներ, ինչպես նաև տարբեր բնակավայրերում ջրաշինարարական ծրագրերի իրականացման ընթացքը: Օրինակ, Երևանի Կենտրոն, Մալաթիա-Մեքաստիայում և Էրեբունի վարչական շրջաններում, Արմավիրում, Վեդիում, Էջմիածնում, Իջևանում, Վարդենիսում, Աշտարակում, Նոր Գեղիում, Երասխում:

Նախորդ ամիսների նման, ապահովվել են հրապարակումներ նաև Վեոլիա Գրուպի առաջընթացի մասին: Դրա վառ օրինակը վերջինիս համագործակցությունն է Solvay-ի հետ՝ էլեկտրական մեքենաների մարտկոցների վերամշակման նպատակով, ինչպես նաև Danone-ի հետ նորամուծությունները ռեսուրսների կառավարման ոլորտում:

Չեն մոռացվել պետական տոները, հանրային իրադարձությունները և կորպորատիվ միջոցառումները: Այսպես, նշվել է Հայաստանի Անկախության օրը, անդրադարձ է կատարվել Վեոլիա Գրուպի հերթական «Առողջապահության և անվտանգության շաբաթ»-ի շրջանակներում իրականացվող միջոցառումներին, իսկ այն փաստը, որ Վեոլիա Հայաստանը, շարունակելով բարելավվել իր դիրքերը՝ 1000 խոշոր հարկատուների ցանկում զբաղեցնում է 28-րդ տեղը, հանրությանը ներկայացվել է որպես Վեոլիայի առաջընթաց: Մեր հանրային ծառայությունները մատուցող ընկերությունը հանրության կողքին է եղել նաև Արցախյան հերոսամարտի օրերին, արդեն պատերազմի 3-րդ օրը, որպես սկիզբ, «Հայաստան» հիմնադրամին հատկացնելով 20 մլն դրամ:

Հաշվետու ամսին հրապարակվել է Գնումների վարչության կողմից իրականացվող տարատեսակ մրցույթների, ինչպես նաև ջրանջատումների վերաբերյալ բոլոր հայտարարությունները: Ընդ որում, վերջիններս պարտադիր կարգով ուղարկվել են նաև բոլոր շահագրգիռ պետական և ինքնակառավարման մարմիններին:

Ընդհանուր առմամբ սեպտեմբերին իրականացվել է ավելի քան 40 հրապարակում, որի զգալի մասը, որպես ընկերության պաշտոնական հայտարարություն, տեղադրվել է նաև veolia.am կայքում:



ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



## 5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● ՈԱԱ Բաժինը, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 248-րդ հոդվածի և Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջներով, մշակեց և Ընկերության գլխավոր տնօրենի 03.09.2020թ. N 53Լ հրամանով գործողության մեջ դրեց «Կաթսաների և կաթսայական տեղակայանքների անվտանգ շահագործման պահանջները» N 29-ը հրահանգը:

● Հաշվետու ամսում բաժինը մշակեց Ընկերության 2021 թվականի «Առողջության և անվտանգության կառավարման պլանը», «Ուսուցման և վերապատրաստման պլանը» և ներկայացրեց Ընկերության ղեկավարության հաստատմանը:

● Հիմք ընդունելով Գրուպի Անվտանգության Տնօրեն Պրն Ժան-Լուի Ֆիւսթեւձիի 14/09/2020 թվականի գրությունը և Գրուպի կողմից 2020 թվականի մայիսին սահմանված Անվտանգության Պլանի օրինակելի ձևը, ՈԱԱ Բաժինը մշակեց և Ընկերության գլխավոր տնօրենի 23.09.2020թ. թիվ 57Լ հրամանով գործողության մեջ դրեց «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Անվտանգության պլանը»:

● Համաձայն «Քաղաքացիական պաշտպանության մասին» և «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ Կառավարության 2004թ. ապրիլի 22-ի թիվ 633-Ն որոշմամբ հաստատված «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգի» պահանջների՝ լրամշակվել և Ընկերության գլխավոր տնօրենի 28.09.2020թ. 60Լ հրամանով գործողության մեջ է դրվել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Անվտանգության քաղաքացիական պլանը», միաժամանակ նույն ներքին իրավական ակտով Ընկերության ՔՊ Շտաբի կազմում կատարվել են համապատասխան փոփոխություններ:



## 5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐՍԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Բաժինը, յուրաքանչյուր աշխատանքային օր Ընկերությունում՝ COVID-19 համավարակի կանխարգելման և Ընկերության ընթացիք աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն փոխանցեց էլեկտրոնային գրությամբ ՀՀ Ջրային կոմիտե:


● ՈԱԱ Բաժինը ՄՌԿ վարչության հետ համատեղ օպերատիվ կերպով Ընկերությունում COVID-19-ով վարակված կամ կոնտակտավոր աշխատողների մասին համապատասխան տեղեկատվությունը տրամադրեց ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի պատասխանատուներին:

● ՈԱԱ Բաժինը, ելնելով ՀՀ կառավարության 11/09/2020 թվականի «Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» 1514-Ն որոշմամբ հաստատված «Կարանտինի ընթացքում կիրառվող միջոցառումներից և սահմանափակումներից» և ՀՀ առողջապահության նախարարի 04/08/2020թվականի 17-Ն հրամանով հաստատված ՄԿ N 3.1.2-001-20 համապատասխան Սանիտարական կանոնների Ընկերությունում ապահովման պահանջների գնահատման անհրաժեշտությունից, շարունակեց ստուգայցեր իրականացնել Ընկերության թվով 8 գրասենյակում:

● Ինչպես նաև ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանումներից ՈԱԱ բաժնին ներկայացվեցին կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմերի ջերմաչափման և գրասենյակների ախտանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:

● Հաշվետու ամսվա ընթացքում ՈԱԱ բաժինը կազմակերպեց Ընկերության գրասենյակների մոտ 350 քմ մակերեսի լրացուցիչ ախտահանման աշխատանքները:

### Տրամադրված անհատական պաշտպանության միջոցներ և պոստերներ /մարտ-սեպտեմբեր



### 5.3. ԲՈՒԺԶԶՆՈՒՄ


● ՈԱԱ Բաժինը, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2003թ. մարտի 27-ի N 347-Ն որոշմամբ, «Բիուսեդ» կլինիկական ախտորոշման կենտրոնի հետ համատեղ շարունակեց կազմակերպել և իրականացնել խմելու ջրի մաքրման, վարակազերծման և ջրամատակարարման ցանցի սպասարկման աշխատանքներում անմիջականորեն ներգրավված Ընկերության թվով 164 աշխատողի (որից 44-ը կրկնակի) մանրէակրության/որդակրության բժշկական հետազոտության աշխատանքների և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկների վարման գործընթացի ավարտական փուլը:

● Ընդհանուր առմամբ Ընկերության 739 աշխատող անցավ բժշկական հետազոտություն, որից 44-ը՝ համապատասխան բժշկական բուժում ստանալուց հետո կրկնակի հետազոտվեցին:

### 5.4. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ


● Հիմք ընդունելով «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ՏԿ և ԱԻ նախարարի 18/06/2015թ. N 595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոնների» 454-րդ կետի 6-րդ ենթակետի, ինչպես նաև Վեոլիա Գրուպի

● «Կրակային աշխատանքներ» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջները՝ ՈԱԱ Բաժինը «Նարեկ» գիտահետազոտական կենտրոնի հետ համատեղ Ընկերության գլխավոր տնօրենի 09/09/2020-ի N 5370Ա հրամանի հիման վրա կազմակերպեց և իրականացրեց Ընկերության թվով 7 եռակցողի համար մասնագիտական որակավորման հեռահար դասընթաց/գիտելիքների ստուգում:



● 2020 թվականի սեպտեմբերի 9-ին և 10-ին ՈԱԱ Բաժնի պետը մասնակցեց Գրուպի Բիզնես Միավորների Անվտանգության պատասխանատուների համար Վեոլիա Կամպուսի և Գրուպի Անվտանգության Տնօրինության կողմից կազմակերպված E-Learning հարթակում 5 մոդուլից (Գրուպի Անվտանգության Տնօրինության ընդհանուր նկարագիրը, Անձանց և Գույքի անվտանգությունը և հուսալիությունը, Ճգնաժամային կառավարում, Կիրառական անվտանգություն, Հետազոտությունների Բյուրո) բաղկացած դասընթացին, անցավ Դասընթացի յուրաքանչյուր թեստավորումներ և արդյունքում վերջինիս Գրուպի Անվտանգության Տնօրինության կողմից շնչեղվեց «Անվտանգության Պատասխանատուի» որակավորման սերտիֆիկատ:

### 2019-2020թթ. կազմակերպված դասընթացների/թեստավորումների (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



## 5.5. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱԲԱԹ-2020

● Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Գլխավոր Գործադիր Տնօրեն Անտուան Ֆրերոյի՝ 22.06.2020 թվականի՝ ա.թ. սեպտեմբերի 14-18-ը ընկած ժամանակահատվածում նախատեսվող «Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ 2020» ամենամյա վեցերորդ միջոցառումների անցկացման վերաբերյալ հանձնարարականը և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ գլխավոր տնօրենի 09.09.2020թ. թիվ 55 Լ հրամանը, ՈԱԱ Բաժինը միջոցառման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում Ղեկավար կազմի հետ համագործակցելով, մշակեց «Առողջության և անվտանգության միջազգային շաբաթ-2020» միջոցառումների ծրագիրը: Ադապտացվեցին և թարգմանվեցին միջոցառման պոստերները, կազմվեցին պազլներ, կազմակերպվեցին դրանց տպագրման և ստորաբաժանումներին բաշխման աշխատանքները:




● Ընկերության տարբեր ստորաբաժանումներում ԱԱ Շաբաթ-2020 միջոցառման շրջանակներում կազմակերպվեցին «Ես տեսնում եմ այն, ինչ դու չպետք է անես» ֆիլմի դիտումներ և քննարկումներ, աշխատողների փոքր խմբերում կազմակերպվեց ուսուցողական խաղ՝ «Անվտանգության ռիսկեր պարունակող փազլների» հավաքում, հավաքած փազլներում Ռիսկերի հայտնաբերում և այդ ռիսկերի շտկմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ քննարկում:



## 5.6. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՏՈՒԳԱՅՅԵՐ

● Բաժինն իրականացրեց Անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 9 ՀՏԿ-ում և 8 ստորաբաժանումում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում, ինչպես նաև կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

2020 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



5.7. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱԻՆ ՀԵՏ

● Համաձայն ՀՀ Արարատի մարզպետի 15/01/2020 թվականի № ՄՌ/01-2020 որոշմամբ հաստատված «ՀՀ Արարատի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների պլանի» պահանջների 2020 թվականի սեպտեմբերի 17-ին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ «Հարավ» Շահագործման Տնօրինության «Արտաշատ» տեղամասում վթարային խմբի հետ անցկացվեց «ԱԻ հետևանքով ք. Արտաշատ, Կիրովի 12 հասցեում գտնվող ջրագծի վրա առաջացած վթարի դեպքում վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով հատուկ տակտիկական ուսուցնավարժություն, որի նպատակն էր կատարելագործել «Արտաշատ» շահագործման տեղամասի ղեկավարների և կազմավորումների գործնական հմտությունները արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ուղղությամբ՝ կցագրված տեխնիկայի և գույքի կիրառմամբ, ինչպես նաև արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման գործում կազմավորումների պատրաստվածության աստիճանը:



ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



## 6.1. Համակարգչային ցանց

- Ստեղծվել է “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” նոր բաժին:
- Նոր “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժինը համալրվել է աշխատակիցներով՝ կազմակերպվել են հարցազրույցներ և կապվել են աշխատանքային պայմանագրեր:
- Հաստատվել և ստորագրվել է քարթրիջների և տպիչների լիցքավորման և վերանորոգման պայմանագիր մրցույթի արդյունքում ամենալավ պայմաններ ներկայացված կազմակերպության հետ:
- Մեկնարկվել է քարթրիջների և տպիչների լիցքավորման և վերանորոգման ներքին գործառնությունների և այդ գործառնությունների կառավարման և վերահսկման գործիքների շահագործումը:
- Շահագործման է հանձնվել նոր ծրագրային մոդուլ “Ինտերակտիվ” համակարգի շրջանակներում քարթրիջների և տպիչների լիցքավորման և վերանորոգման ներքին գործառնությունների և այդ գործառնությունների կառավարման ավտոմատիզացման համար
- Ստեղծվել են գնման հայտեր և մեկնարկվել է գնման գործընթաց “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժնի հիմնական գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ գործիքների և նյութերի համար
- Ստեղծվել են գնման հայտեր և մեկնարկվել է գնման գործընթաց “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժնի հիմնական ծախսվող նյութերի և սարքավորումների համար
- “Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության SS ենթակառուցվածքների և սերվերների սպասարկման” բաժնի մասնագետները մասնակցել են “Վեոլիա” Խմբի կողմից կազմակերպված “SATAWAD Week” հանդիպումներին և սեմինարներին:
- Մասնակցվել է “Վեոլիա” Խմբի IT անվտանգության բաժնի կողմից կազմակերպված IT անվտանգության ժողովին, որին մասնակցել են բոլոր “Վեոլիա” խմբում առկա երկրների IT անվտանգության մասնագետները և քննարկվել է ապագա զարգացման ծրագրերը և IT անվտանգության մասնագետների փոխհարաբերակցությունների ձևաչափը:
- Իրականացվել է հանդիպում “Beeline” կազմակերպության ներկայացուցիչների հետ: Քննարկվել են ապագա համագործակցության տարբերակներ, նոր առաջարկներ և հնարավոր տեխնիկական նորամուծություններ:
- Աբովյան 66ա հասցեում գտնվող սերվերային սենյակում փոխարինվել են “Beeline” կազմակերպության ցանցային սարքավորումը և ցանցային լարանցումները
- Իրականացվել է IU-Connect հեռախոսային կենտրոն համակարգի ծրագրային տարբերակի թարմացում:  
m Ներդրվել է դոմենի օգտատերերի գաղտնաբառերի քաղաքականություն “Վեոլիա” Խմբի գաղտնաբառերի կարավարման քաղաքականության հիման վրա:
- Գնվել է LastPass համակարգի հավելյալ օգտատերերի արտոնագրեր:
- Հեռահար տվյալներ փոխանցող ջրաչափերի սարքավորման և ծրագրային ապահովման տեստավորման համար գնվել է հավելյալ սարքավորում՝ արտաքին GPS մոդուլ:
- Ներդրվել է համակարգային Օգտատերերի կառավարման նոր գործընթաց IT և Մարդկային Ռեսուրսների կառավարման բաժինների մինջև:
- Հայտնաբերվել է Kerio էլ. նամակագրության սերվերում առկա ծրագրային ապահովման հետ կապված խնդիր նամակներին կից .pdf ֆայլերի հետ: Խնդիրը կապված է ծրագրային ապահովման տարբերակի հետ: Հաշվի առնելով այն փաստը, որ հնարավոր չէ այս պահին փոխել այդ ծրագրային ապահովման տարբերակը մշակվել և ներդրվել է ժամանակավոր շրջանցման ձև:
- Մեկնարկվել է IT բաժնի համար նախատեսված պահեստը պլանավորման, նախագծման և հաստատման գործընթացը:
- “Վեոլիա” Խմբի ԴԵՈՒՍ թմի կողմից տրամադրվել է տեղեկատվություն կազմակերպության աշխատանքային Google Drive-ում առկա ֆայլերի կազմակերպությունից դուրս մարդկանց հետ անվտանգ կիսվելու մասին, իչնը բացում է նոր հնարավորություններ կազմակերպության հաճախորդների և գործընկերների հետ փոխհարաբերակցությունների հարցում: Այդ տեղեկատվությունը թարգմանվել և ներկայացվել է կազմակերպության փոլոր աշխատակիցներին:
- Մեկնարկվել է vjur.am էլեկտրոնային նամակագրության համակարգում ոչ անվանական էլ. հասցեների փոխարինման և ոչնչացման գործընթացը:
- Ստեղծվել է հաշվետվությունների կառուցման համար նոր սերվեր
- Մշակվել են և շահագործման են հանձնվել Առևտրային տնօրինության համար նոր հաշվետվություններ Ինտերակտիվ համակարգի հաշվետվությունների բլոկի և Microsoft PowerBI ծրագրային փաթեթի միջոցով:
- Սպասարկվել է մոտ 600 զանգ IT բաժնի աջակցության համարով
- Գրանցվել և փակվել է մոտ 500 աջակցության տոմս:

## 6.2. Ինտերակտիվ համակարգ

Սեպտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Ձևավորվել և ստեղծվել է նոր՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն»:
- Նոր վարչության ստեղծմամբ՝ իրականացվել են բազում կազմակերպչական գործողություններ:
- Կազմակերպվել է մրցույթ, և արտաքին ընկերության ջանքերով իրականացվել է քարթիջների և տպիչ սարքերի տեխնիկական և լիցքավորման գործընթաց:
- ԱՏ փոփոխությամբ պայմանավորված՝ մի շարք փոփոխություններ են իրականացվել ինտերակտիվ համակարգում:
- Ակտեր

Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է սեպտեմբեր ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

<b>Խախտման արձանագրություն</b>			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. ի/մ	մլն. դրամ
Հյուսիս	3	0.8	0.1
Էրեբունի	34	15.8	2.7
Շենգավիթ	4	1.2	0.2
Կենտրոն	2	5.2	0.8
Արաբկիր	12	8.8	1.6
Մաշտոց	9	9.1	1.5
Շահումյան	5	5.7	1.0
ԱՎԲ	87	49.0	8.4
Շիրակ	5	1.2	0.2
Արթիկ	3	1.0	0.2
Արարատ	2	0.2	0.0
Արմավյան	23	17.2	2.9
Հրազդան	12	6.3	0.6
Ալավերդի	2	1.0	0.2
Ապարան	1	0.3	0.1
Գավառ	13	3.5	0.6
Գորիս	6	3.8	0.6
Էջմիածին	3	0.9	0.2
Թալին	3	0.9	0.1
Իջևան	8	1.2	0.2
Կապան	12	5.9	0.9
Մասիս	4	1.4	0.2
Արմավիր	4	5.1	0.9
Ջերմուկ	2	0.5	0.1
Աշտարակ	9	2.8	0.4
Չարենցավան	2	0.5	0.1
Սիսիան	2	12.0	1.8
Սյիխուակ	2	0.3	0.0
<b>Ընդամենը</b>	<b>274</b>	<b>161.4</b>	<b>26.6</b>

- Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)

Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է սեպտեմբեր ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

<b>Լաբորատորիա</b>				
Տեղամաս	Միջամտություն		Մնասրբություն	
	քանակ	հազ. ի/մ	քանակ	հազ. ի/մ
Հյուսիս	12	5.15	78	0.83
Էրեբունի	5	1.65	22	0.38
Շենգավիթ		-	1	0.30
Կենտրոն	13	27.75	46	0.40
Արաբկիր	7	2.17	61	0.48
Մաշտոց	3	1.87	16	0.10
Շահումյան	4	0.88	39	0.22
Քանաքեռ-	2	0.52	8	1.28
Լոռի	2	1.03	24	0.14
Արթիկ	7	2.84	34	0.14
Արմավյան	21	8.53	71	0.50
Հրազդան	61	22.10	56	0.20
Ալավերդի	3	1.29	58	0.38
Աշոցք		-	3	0.02
Արտաշատ	13	1.75	134	1.33
Բերդ	2	0.37	27	0.09
Գավառ	1	0.56	38	0.20
Գորիս	25	11.86	19	0.23
Դիլիջան		-	5	0.04
Էջմիածին	11	4.55	21	0.09
Թալին		-	1	4.63
Իջևան	1	0.06	4	0.02
Կապան	4	1.55		-
Ճամբարակ		-	1	0.01
Մասիս	5	3.99	9	0.08
Մեղրի		-	4	0.07
Նոյեմբերյան	1	0.52	13	0.06
Արմավիր	4	0.90	18	4.55
Ջերմուկ	2	0.52	7	0.01
Սևան		-	10	0.09
Աշտարակ	16	6.52	40	0.52
Չարենցավան	13	3.18	72	0.31
Սյիխուակ	2	0.17	13	0.08
Ստեփանավան	2	0.52	9	0.09
Տաշիր		-	5	0.02
<b>Ընդամենը</b>	<b>242</b>	<b>112.78</b>	<b>967</b>	<b>17.88</b>



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա  
E-mail: info@vjur.am